ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2 ապրիլի 2015թ. թիվ 103-Ա

«ԴՍԵՂԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 1999 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 157 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետի, 67-րդ հոդվածի 1-ին կետի «ա» և «ը» ենթակետերի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N 41-Ա որոշման 1-ին կետի՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. «Դսեղի առողջության կենտրոն» պետական փակ բաժնետիրական ընկերության 11610000 ՀՀ դրամ կազմող կանոնադրական կապիտալը նվազեցնել 8690000 ՀՀ դրամով՝ բաժնետոմսերի հետգնման և մարման միջոցով: Նվազեցումից հետո կանոնադրական կապիտալը սահմանել 2920000 ՀՀ դրամ:

2. Հաստատել կանոնադրության փոփոխությունը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 1999 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 157 որոշմամբ հաստատված «Դսեղի առողջության կենտրոն» պետական փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընկերության կանոնադրական կապիտալը 2920000 ՀՀ դրամ է, որը կազմում է 292 սովորական անվանական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 10000 ՀՀ դրամ անվանական արժեքով:

Բոլոր 292 սովորական բաժնետոմսերը տեղաբաշխված են և պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, որի անունից բաժնետոմսերի կառավարման իրավասություններն իրականացնում է Հիմնադիրը:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը սովորական են»:

3. Հանձնարարել «Դսեղի առողջության կենտրոն» պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ դիմել պետական ռեգիստրի գործակալություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցման համար:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Սամվել Լամբարյանին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2015թ. ապրիլի 2
ք.Վանաձոր